ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2023 թվականի N 698 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 12-ի «Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության փորձաքննության կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 640 որոշման նախաբանը «7-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «1-ին մասի «ժե» կետի» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 27-ի «Միջուկային և ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման կարգը հաստատելու մասին» N 931-Ն որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հիմք ընդունելով «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ժզ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության ու պահպանության ուժեղացման հայեցակարգը և միջուկային տեղակայանքների ու միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության կանոնները հաստատելու մասին» N 1231-Ն որոշման նախաբանի «բ» բառը փոխարինել «1-ին մասի «ժէ» բառերով:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի «Ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման և վնասազերծման կարգը հաստատելու մասին» N 553-Ն որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հիմք ընդունելով «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ժը» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.»:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Ատոմային էլեկտրակայանում շահագործման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի քննության կարգը հաստատելու մասին» N 418-Ն որոշման նախաբանի «17-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի և 20-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետին» բառերը փոխարինել «7-րդ հոդվածի 1-ին մասի «ժթ» կետին» բառերով:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման նկատմամբ պահանջները հաստատելու մասին» N 1085-Ն որոշման՝

1) վերնագրում, 1-ին կետում, հավելվածի վերնագրում, 1-ին և 2-րդ կետերում «ԱԷԿ»-ի» բառը փոխարինել «ատոմային էլեկտրակայանի» բառերով.

2) նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հիմք ընդունելով «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ի» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.»:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի N 2 էներգաբլոկի անվտանգության հիմնավորման հաշվետվության կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2013-Ն որոշման նախաբանի «16-րդ հոդվածի «բ» կետի և 20-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի պահանջների կատարումն ապահովելու նպատակով» բառերը փոխարինել «7-րդ հոդվածի 1-ին մասի «իա» կետին համապատասխան» բառերով:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Միջուկային նոր էներգաբլոկի (էներգաբլոկների) նախագծային անվտանգության պահանջները հաստատելու մասին» N 1411-Ն որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հիմք ընդունելով «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.»:

9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 13-ի «Միջուկային նոր էներգաբլոկի հրապարակի սեյսմիկ վտանգի գնահատման մեթոդը հաստատելու մասին» N 1546-Ն որոշման՝

1) վերնագիրը և 1-ին կետը «էներգաբլոկի» բառից հետո լրացնել «(էներգաբլոկների)» բառով.

2) նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հիմք ընդունելով «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ

հոդվածի 1-ին մասի «իբ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.»:

10. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 4-ի «Միջուկային նոր էներգաբլոկի (էներգաբլոկների) հրապարակի անվտանգության պահանջները հաստատելու մասին» N 708-Ն որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հիմք ընդունելով «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.»:

11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի «Ռադիոակտիվ նյութերի և ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի ֆիզիկական պաշտպանության կանոնները հաստատելու մասին» N 11-Ն որոշման նախաբանի «ը» և «թ» կետերին» բառերը փոխարինել «1-ին մասի «իգ» կետին» բառերով:

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ